

ՔՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

1921 - ՅՈՒՆԻՍ - 1921

52

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Հ. ՔԵՐԵՈՎՔԻ ԶԲԱՐԵԱՆ. — Ս. Յակոբ ՄԺՐԵՆԱՅԵՐՈՅ ԶԵՐՈՅՐ.	194
Հ. ԳՐԻԳՐԻՍ ԱՅՏԵՆԱՆ. — ԹԻՐԵԱՔԵԱՆ ԲԺ. ՅԱՐՈՒԹԻՆ ԽԱՆ	196
Հ. Ն. — ԱՐԶԱԽԻ ԶՕՂԱԿԵՐԱՆ. (Բ.)	201

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

Հ. ԴԻՈՆԻՍԻՍ ԳԱՂԱՏՈՍԱՆ. — Ուշագրաւ Պեղումներ	204
---	-----

ՊԱՏՄԱԿԱՆ

Հ. ՂԵՌՈՒՂ ՏԱՅԵԱՆ. — Իպն ՄՈՒՍՍԱՐԻ ՏԱՐԵԱՐՈՒԹԻՆՆԵՐ ԵԳԻՍՏՈՍԻ ԵՐԵՐ ՀԱՅ ՆԱԽԱ- րարաց մասին	205
--	-----

ԿՐԹԵԱԿԱՆ

Հ. ԳԵՐԵՐ ՈՍԵԱՆ. — Ամերիկահայ թերթի մը ուղղութիւնը.	209
--	-----

ԳՐԱԿԱՆ

Հ. ԱՐՏԵՆ ՂԱՅԵԱՆ. — ՎԻՐԳԻԼԻՍԻ Մշակականք (Բ. ԳԻՐԺ).	213
---	-----

ԳԻՏԱԿԱՆ

Հ. ԵՐՈՒՐԵՐ ՍԻՐՈՒՆԵԱՆ. — Միջատներու և օձերու թռչները	216
---	-----

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հ. ԴԻՈՆԻՍԻՍ ԳԱՂԱՏՈՍԱՆ. — Վ. Հ. Համազասպ Վ. Սափարեան. (Նամակերձ յարակից տեսութեամբ)	220
---	-----

ՀԱՅԵՐ

Հունգարահայերը վերջին տասնեակ տարիներու ընթացքին՝ կը գտնուէին առանց ո և է բաւոյական ու հոգեւոր կենդանի, և վտանգ կը սպառնար՝ հունգար հայրենիքի հանդէպ սիրոյն և ազգիցութեան տակ, կորսնցնել տակաւ իրենց բուն ցեղին առակի կարգ անցած առաքինութիւններն ու շատ գնանատուած նկարագիրը:

Հունգարահայերու ընկերութիւնն իրեն հիմնական նպատակ ունի՝ իբրեւ պարտականութիւն մշակել ազգագրական միութեան զգածումը, առանց սակայն ազգայնական բաժանման կարեւրութեան մասին վայրկեան մ'իսկ մտածելու:

Բայց ոչ միայն մեր այս երկրի Հայերուն մէջ կ'ուզուի ստեղծել միութեան այս զգածումը, այլ կ'ուզուի տարածել նոյնը նաեւ մեր հայ հին ազգին աշխարհիս ամէն կողմը ցրտած անդամներուն մէջ: Մտակայ անցելոյն, մանաւանդ թէ մեր օրերուն պատահած դէպքերու ընթացքին ցաւով հաստատուեցաւ, որ ժողովուրդներու մըրցադրութեան մէջ մնացած ենք առանձին ու լեռքուած և առանց համակրանքի:

Այդ, մեր ստեղծած այս զգածմանց կապերու հաստատուն հիմը կարելի է կազմել միայն սերունդներու շահերու ամբողջութեամբ, որով հայ ժողովուրդը պիտի կարենայ գրաւել այն դիրքը, զոր ունէր Հունգարիոյ և մանաւանդ Դրանսիականի միջոցով վաճառականութեան մէջ:

Սակայն միւս կողմանէ այս ժողովուրդը օղակ մը պիտի ըլլայ նաեւ բոլոր աշխարհի Հայոց տնտեսական վաճառականութեան մէջ, հիմնելով այսու կապ մը արեւելքի և արեւմուտքի միջև: Աշխարհիս ընդհանուր վաճառականութեան մէջ մեծ դեր խաղացող Հայերը՝ ձեռք պիտի բերեն ամէն տեսակէտով մեծամեծ յաջողութիւններ իրենց վաճառականական յարաբերութիւններով: Ամէն Հայու պարտականութիւնն է ուրեմն քաջալերել հաստատութեանս գոյութիւնը, և Հունգարահայ Միութիւնը պիտի կատարէ իւր պարտքը կոչ ընելով իւր անդամներուն և աշխարհի բոլոր վաճառական Հայութեան, որպէս զի նպատակն այս ծրագրեալ վաճառականական Միութեան:

Պաշտօնաւար, Յունուար 1921.

Baron ERNEST DANIEL m. p.
président.

Հ Ր Ա. Ի Է Ր

Հունգարահայ անանուն վաճառականական Միութեան շահարաժ ինկնրն ստորագրելու:

Հունգարահայ ընկերութիւնը — որ միայն վեց ամիս յառաջ հաստատուած է — զազափար յաջաւ տեսնծելու: Հունգարահայ վաճառականական անանուն ընկերութիւն մը:

Այս գաղափարն արձագանգ և նեցուկ գտաւ Հայրենիքէն միայն նորերս եկած հայ եղբայրներու քով, եւ որոնք ոչ միայն արեւելքի և օտարերկրեայ, այլ և Եւրոպայի ու բոլմանդակ շախարհի հայ վաճառականական տներու հետ յարաբերութեան մէջ են:

Կլատի առնելով Հայոց յարեւել ունեցած առաջնակարգ դիրքը վաճառականական ճիւղի մէջ, իրենք առաջին ստատորոգները պիտի ըլլան այս գործնի ի գլուխ հանելու: Նպատակ ունենալով Հունգարիոյ համար ապահովելու դիրք մը, որ իւր աշխարհագրական դիրք շնորհիւ, իրեն կը պատկանի զէպի Արեւելք ապրանքներու փոխադրութեան մէջ: Ընկերութեանս գլխաւոր պարտականութիւնն է այս գործն յաջող վախճանի հասցնել:

Մտադիր ենք նաև մեր վաճառականական կեանքի մէջ ընդունիլ վստահելի, ուղղամիտ և արդար, համեստ չափով գոհացող գործակատարներ, և որոնք քրիստոնէական տեսակիտի հաւմաձայն վաճառականական սկզբունքներու տէր ըլլալով՝ մեր և օտարին մէջ եղած այս տուրեառը հանելի պիտի դարձնեն: Այսու պիտի մեծարուի ու գնահատուի վաճառականական ասպարէզը նաև երկրիս ներքին մասերու մէջ:

Բաց այս նպատակ ունինք մեր հունգարայի երկրաստորութիւնէն վաճառականներ հասցնել ընդարձակ հայեացքով: Առ այս վախճան գործածելով մեր գուտ լանջ, զոր կը յուսանք ձեռք բերել՝ միանգամայն պաշտպանելով նաև մշակոյթի և ընկերական շահերը: Այս պատճառաւ մտադրած ենք հունգարահայ երկրաստորոգներ արեւելք յղել, որպէս զի արեւելեան լեզուները սովորին, ընտանեկան անոնց հետ ու վաճառականական յարաբերութիւն հաստատեն: Դմանալով ամէն զէպի մէջ դիրքութիւնները պիտի ընծայենք, որ արեւելքի հայ երկրաստորութիւնը կարենայ իւր ուսմունքն Հունգարիոյ մէջ շարունակել, գլխաւորաբար Պոտաբէշտի տնտեսագիտական և բազմաբնուստից համալսարանները, վաճառականական ու ճարտարարուեստի բարձրագոյն վարժարանները, որպէս զի կարող ըլլայ ճանչնալ մեր հայրենիքը, և մեր յարաբերութիւնները փոխադարձ ըլլան:

Հոգ պիտի տանինք մեր երկրաստորոգները նաև գործնական վաճառականութեան մէջ հրահանգելու, և այսպէս թէ տեսականապէս և թէ գործնականապէս մարզուած հասցնել զիրենք մինչև անկախ գործունէութիւն:

Մեր առաջին գործը պիտի ըլլայ Դրանսիականիոյ և հայրաստին Հունգարիոյ հայ վաճառականներու հետ վաճառականական յարաբերութիւններ հաստատել: Տուրեառի վաճառականութիւնը սկսելուն պէս, կարող պիտի ըլլանք հաստատել, ինչպէս նաև ընդարձակել ու պահպանել վաճառականական յարաբերութիւնները ոչ միայն Արեւմուտքի վաճառական և գործարարներէ հայերու հետ, այլ նաև Արեւելքի վաճառականութեան կենդրոնատեղիներու և վաճառականներու հետ:

Ձեռնարկութեանս նպատակն է այն զոր յայտարարել մէջ այժմ իսկ զօնցինք. իւր գործառնութիւնքն են՝ զոնք ու ծախել իւր հաշուով կամ

յանձնարարողէքով ամէն տեսակ ապրանք, որ յարմար է ներածութեան և արտածութեան, գաւտնք մթերելի են են:

Ձեռնարկութեանս տեղումներն է 90 տարի: Մեր նպատակն իրականացնելու համար կը հիմնենք անանուն ընկերութիւն մը անուամբս «Հունգարահայ վաճառականական Անանուն Ընկերութիւն», ներկայիս համար 10,000,000 կըրոնէ դրամագլխով:

Երբ ստորագրութիւնն արժէթղթերու թիւէն աւելի ըլլայ, հիմնադիրները պիտի բաշխեն չափաբաժիններն ըստ իրենց դատման. բայց այս պարագայիս Ընդհանուր Անանունագիր ձողովն ալ արտօնութիւն պիտի ունենայ դրամագլխին աւելի բարձր գումարի մը վերածելու:

Դրամագլուխ՝ չափաբաժինները կը բաղկանան 20,000 չափաբաժիններ, իւրաքանչիւր մուրհակագիր 1, 5, 10, 20 և 50 չափաբաժին ունենալով. իւրաքանչիւրին անուանական արժէքն ըլլալով 500 կըրոնէ:

Ձեռնարկութեանս նիստն է Պոտաբէշտ: Ի հարկին մասնաճիւղեր պիտի հաստատուին նաև գաւառներու և արտասահմանի մէջ, բնականապէս գլխաւորաբար արեւելքի մէջ:

Ստորագրութիւնը կը փակուի 1921 Մայիս 20ին: Ստորագրութեան ժամանակ պէտք է վըճարել ստորագրուած բաժնեթղթերուն գումարին 30%ը, ինչպէս նաև իւրաքանչիւր բաժնեթղթի վրայ 20 կըրոնէ իբրև դրոշմաթուղթի և հիմնարկութեան ծախք: Միացածները պիտի վճարուին մինչև 30 ցունիս 20% և մինչև 30 ցունիս 1921 40%: Ցետալվարները զանց ընողը կանխաւ տըւած 30%ը պահանջելու իրաւունքին կը զրկուի: Բաժնեթղթերի անուանակար են եւ անոնց փոխանցումը կանոնագրի նախատեսած պայմաններու ենթարկուած է:

Հիմնադիրներն իրենց կը վերապահեն երեք տարուան համար առաջին վարչութիւնն անուանելու իրաւունքը:

Վարչական խորհրդոյ անդամ այն միայն կըրնայ ըլլալ, որ զօնէ 200 բաժնեթուղթ կը ըստորագրէ կամ ստորագրել կու տայ: Վերաքանիչ անգամ կ'ըլլայ այն, որ զօնէ 100 բաժնեթուղթ կը ստորագրէ կամ ստորագրել կու տայ, մագնաթողով անգամ կ'ըլլայ այն, որ անուանակար 50 կը ստորագրէ կամ ստորագրել կու տայ: Բայց այն պարագային որ ինքն արձանագրել կու տայ, պէտք է որ ինքն անհամբ արձանագրէ՝ ստորագրուած չափաբաժիններու զօնէ 10%ը:

Ստորագրելիս գումարներն ուղղակի պէտք են յանձնուիլ երկրիս խնայողական արկիւղերու առաջին Միութեան կենդրոնատեղին (Première Union de Caisse d'Epargne Nationale de Pest. Pesti Hazai Első Takarékpénztár Egyesület, Budapest, IV. Deák Ferencz utca 5.) ի հաշիւ Հունգարահայ Անանուն Վաճառականական Միութեան:

Ոչ որ արեւունք ունի տրուած դրամէն մաս մը քաշել:

Ստորագրութիւններ կ'ընդունուին հիմնադիրներու քով և Միութեանս արժամանակեայ գրասենեակին որ է՝ V. Falk Miksa utca 13.

Պոտաբէշտ, ցունուար 1921: